17) Կանոնակարգ 3/04-ի 205-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են անվանական արժեքով՝ առանց դրանց գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստների, և ներկայացվում են ըստ առանձին գործիքների:»:

18) Կանոնակարգ 3/04-ի 239-րդ կետի «դասակարգման ենթակա ակտիվների» բառերը փոխարինել «ակտիվների (դասակարգման ենթակա ակտիվներ)» բառերով:

19) Կանոնակարգ 3/04-ի 260-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«260. Թիվ 20 հաշվետվությունը չի ներկայացվում.

1) ոչ օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով կնքված գործարքների համար,

2) մարման գործարքների համար:»:

20) Կանոնակարգ 3/04-ի 262-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Թիվ 20 հաշվետվության համաձայն գործարքի կնքում է համարվում ապահովագրական ընկերության կողմից արժեթղթերի առք կամ վաճառքի պայմանագրի կնքումը:»:

21) Կանոնակարգ 3/04-ի 263-րդ կետը.

ա. 2-րդ ենթակետի վերջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Տարբերակիչ ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»,

բ. 9-րդ ենթակետի վերջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, եթե գործարքի մյուս կողմ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձը գործարքը կնքել է հաճախորդի հաշվին, ապա գործարքի մյուս կողմ է համարվում ոչ թե տվյալ հաճախորդը, այլ այդ հաճախորդի հաշվին գործարք կնքող ներդրումային ծառայություններ մատուցող անձը:»,

գ. 10-րդ ենթակետի «համարը» բառը փոխարինել «համարը, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար» բառերով:

22) Կանոնակարգ 3/04-ի 263-րդ կետը լրացնել 12-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) «Միջնորդը» սյունակը լրացման է ենթակա միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:»:

23) Կանոնակարգ 3/04-ի 266-րդ կետում.

ա. առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Թիվ 20 հաշվետվության 2-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոներին համապատասխան.»,

բ. 1-ին ենթակետից «Թիվ 20 հաշվետվության 2-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.» բառերը հանել,

գ. 2-րդ ենթակետի ««Քանակը՝ հատերով»» բառերը փոխարինել ««Քանակը»» բառով:

24) Կանոնակարգ 3/04-ի 268-րդ կետի 1-ին ենթակետի «գնվում է» բառը փոխարինել «գնվում» բառով:

25) Կանոնակարգ 3/04-ի 270-րդ կետում.

ա. 1-ին ենթակետի ««ֆորվարդ առք» կամ «ֆորվարդ վաճառք»» բառերը փոխարինել ««Ֆորվարդ առք» կամ «Ֆորվարդ վաճառք»» բառերով,

բ. 3-րդ ենթակետի ««Քանակը՝ հատերով»» բառերը փոխարինել ««Քանակը»» բառով:

26) Կանոնակարգ 3/04-ի 273-րդ կետի 1-ին ենթակետում «պարգևավճար» բառը փոխարինել «կոմիսիոն վճար» բառերով:

27) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 3-ի Աղյուսակ 15-ը լրացնել 3.4-րդ տողով՝ «Վերաապահովագրական գումար» բովանդակությամբ:

28) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 9-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):

29) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 20-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):

30) Կանոնակարգ 3/04-ի բոլոր հավելվածներից հանել «Կ. Տ.» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N297-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 297-Ն որոշմամբ

Հավելված 9

«Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները»
կանոնակարգ 3/04 հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական, տարեկան)

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

(հզ. դրամ)

Անվանումը	Մեծությունը նախորդ հաշվետու ժամանակա-շրջանի վերջում	Փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	Մեծությունը հաշվետու ժամանակա-շրջանի վերջում
1	2	3	4
Ընդհանուր կապիտալ			
Հիմնական կապիտալ			
Փաստացի համալրված կանոնադրական կապիտալ			
Գլխավոր պահուստ			
Չբաշխված շահույթ (վնաս) (նվազեցրած միջանկյալ շահաբաժինների չափով)			
Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ, այդ թվում՝			
Ապահովագրական ընկերության կողմից տրված երկարաժամկետ ստորադաս փոխառություններ			
Ոչ նյութական ակտիվներ (այդ թվում՝ շահագործումից դուրս գտնվող), ինչպես նաև ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ ներդրումներ, բացառությամբ՝ ապահովագրական գործունեության համար օգտագործվող համակարգչային ծրագրերի և դրանց օգտագործման իրավունքների			
Ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79 հոդվածի 1-ին մասի 1-ից 10 ենթակետերով նախատեսված գործառնություններ իրականացնող անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումներ			
Ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող, ապահովագրական գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվներ և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումներ			
Ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվներ (ներառյալ՝ դրանց վրա կատարված կապիտալ ներդրումներ), որոնց որևէ մասը վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով տրվել է այլ անձանց			
Ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային մեծության՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 3/02-ով նախատեսված սահմանաչափը գերազանցող մասով			
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 3/02-ի 17-րդ կետի 4-րդ ենթակետում նշված կազմակերպություններից տարբեր այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներ			
Ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ			
Լրացուցիչ կապիտալ			
Լրացուցիչ կապիտալի հաշվարկում չընդգրկվող ապահովագրական գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների, հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվող նյութական և ոչ նյութական ակտիվների՝ այլ համապարփակ եկամտի տարր հանդիսացող վերագնահատումից փոփոխություններ, օգուտներ և վնասներ			

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 297-Ն որոշմամբ

Հավելված 20

«Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները»
կանոնակարգ 3/04 հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(օրական)

Աղյուսակ 1. Ապահովագրական ընկերության կողմից արժեթղթերի առուվաճառքի գործարքների վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործարքի տեսակը (գնում/վաճառք)	Արժեթղթի դասը	Արժեթղթի վերաբերյալ հիմնադրամի ընտրության չհիմնավորված փաստերի առկայության մասին	Արժեթղթերի հետ գործարքներ իրականացնելու համար լիազորված պատասխանատու անձի անունը, ազգանունը	Արժեթղթերի հետ գործարքներ իրականացնելու համար լիազորված պատասխանատու անձի պաշտոնը	Գործարքի կատարման ամսաթիվը	Գործարքի գինը	Ընդհանուր ծավալը	Գործարքի վճարային միջոցի ISO կոդը	Արժեթղթերի հետ գործարքներ իրականացնելու համար լիազորված պատասխանատու անձի պաշտոնի վճարային միջոցի կոդը	Գործարքի վճարային միջոցի կոդը	Գործարքի տարբերակը
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												
13												
14												
15												
16												
17												
18												
19												
20												
21												
22												
23												
24												
25												
26												
27												
28												
29												
30												
31												
32												
33												
34												
35												
36												
37												
38												
39												
40												

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 2. Ապահովագրական ընկերության կողմից իրականացված ռեպո գործարքների վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործարքի ելքային համարը	Գործարքի տեսակը (մուտք/ելք)	Ռեպո գործարքի պայմանագրի համարը	Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի ֆինանսական գործիքի (ՖԳ) ընդհանուր նկարագրությունը	Գործարքի կողմերի իրավաբանական անվանումները	Գործարքի գումարը	Գործարքի արժույթը ըստ ISO 4217	Տոկոսադրույքի տեսակը (ֆիքսված/փոփոխական)	Գործարքի ժամկետը (օրերի քանակով)	Գործարքի ելքային գումարը	Գործարքի ելքային ամսաթիվը	Գործարքի ելքային գումարի փոխհատուցման ձևը	Նշումներ
1														
2														
3														
4														
5														
6														
7														
8														
9														
10														
11														
12														
13														
14														
15														
16														
17														
18														
19														
20														
21														
22														
23														
24														
25														
26														
27														
28														
29														
30														
31														
32														
33														
34														
35														
36														
37														
38														
39														
40														

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 3. Արժութային ֆորվարդ գործարքների կնքման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը ______________________

Ամսաթիվը ____________________________

N	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)	Գործարքի բնույթը	Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ISO կոդը	Ֆորվարդի հիմքում ընկած արժույթի ընդհանուր ծավալը (գումարը)	Միավոր արժույթի փոխարժեքը	Արժույթի (վճարվելիք կամ ստացվելիք) ISO կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Միջնորդը

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ ____________________________
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ ____________________________

Աղյուսակ 4. Արժեթղթերով ֆորվարդ գործարքների կնքման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը ______________________

Ամսաթիվը ____________________________

N	Գործարքի նույնականացուցիչ համարը	Գործարքի տեսակը (ֆորվարդ առք/ֆորվարդ վաճառք)	Գործարքի բնույթը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը	Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով	Միավոր արժեթղթի գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի արժույթի ISO կոդը	Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը	Գործարքի կնքման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Ֆորվարդի վերջնահաշվարկի իրականացման ամսաթիվը	Միջնորդը

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ ____________________________
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ ____________________________

Աղյուսակ 5. Այլ ակտիվներով ֆորվարդ գործարքների կնքման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործարքի կնքման ամսաթիվ	Հետգնման ամսաթիվ	Գործարքի կնքման վայրը (ձեռքբերման կամ/և վաճառքի)	Ակտիվի տեսակը	Ակտիվի միավորների քանակը	Ակտիվի գնահատված արժեքը	Գործարքի կնքման պահին ակտիվի շուկայական արժեքը	Գործարքի կնքման պահին ակտիվի հաշվեկշռային արժեքը	Ակտիվի ISO կոդը	Գործարքի կնքման պահին ակտիվի շուկայական արժեքը	Գործարքի կնքման պահին ակտիվի հաշվեկշռային արժեքը	Գործարքի կնքման պահին ակտիվի գնահատված արժեքը	Գործարքի կողմը

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 6. Արժութային օպցիոնների առքի/վաճառքի գործարքների կատարման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործարքի կնքման ամսաթիվ	Հետգնման ամսաթիվ	Գործարքի կնքման վայրը (ձեռքբերման կամ/և վաճառքի)	Ակտիվի տեսակը	Ակտիվի միավորների քանակը (ընդհանուր ծավալը)	Գործարքի կնքման պահին ակտիվի շուկայական արժեքը	Գործարքի կնքման պահին ակտիվի հաշվեկշռային արժեքը	Ակտիվի ISO կոդը	Օպցիոնի պարգևավճարի		Գործարքի կնքման պահին ակտիվի շուկայական արժեքը	Գործարքի կնքման պահին ակտիվի հաշվեկշռային արժեքը	Գործարքի կնքման պահին ակտիվի գնահատված արժեքը	Գործարքի կողմը
									Ընդհանուր	Ակտիվի ISO կոդը				

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 7. Արժեթղթերով օպցիոնների առքի/վաճառքի գործարքների կնքման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործառնության կատարման համար	Գործառնության կատարման (ձեռքբերման ընկերության) ամսաթիվ	Օպցիոնի տեսակը (դրվճիռ օպցիոն/ գնվճիռ օպցիոն)	Գործարքի կնքման վայրը	Արժեթղթի անվանումը	Արժեթղթերի հիմնադրման վկայականի համարը	Միավոր արժեթղթի գինը	Քանակը	Արժեթղթի ISO կոդը	Արժեթղթի հիմնադրման վկայականի տրման ամսաթիվը	Օպցիոնի պարգևավճարի		Օպցիոնի վկայականի միավորում	Միավորում վճարման արժույթը	Փոխհատուցման վճարման ամսաթիվը	Ընդհանուր ելքի ուժը վճարման	Մեկնաբանություն
											Արժույթը	Գումարը					

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 8. Այլ ակտիվներով օպցիոնների առքի/վաճառքի գործարքների կնքման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործառնության կատարման համար	Գործառնության կատարման (ձեռքբերման ընկերության) ամսաթիվ	Օպցիոնի տեսակը (դրվճիռ օպցիոն/ գնվճիռ օպցիոն)	Գործարքի կնքման վայրը	Ակտիվի անվանումը	Ակտիվի հիմնադրման վկայականի համարը	Միավոր ակտիվի գինը	Քանակը	Ակտիվի ISO կոդը	Ակտիվի հիմնադրման վկայականի տրման ամսաթիվը	Օպցիոնի պարգևավճարի		Օպցիոնի վկայականի միավորում	Միավորում վճարման արժույթը	Փոխհատուցման վճարման ամսաթիվը	Ընդհանուր ելքի ուժը վճարման	Մեկնաբանություն
											Արժույթը	Գումարը					

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 9. Փոխարժեքային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործարքի կնքման ամսաթիվ	Գործարքի տեսակը	Գործարքի կնքման վայրը (իսկ դրամական միջոցների տեսակը)	ISO կոդի փոխարժեքը	Գործարքի գումարը	Ընդհանուր ելքային հոսքերի ներկայացված արժույթը	Ընդհանուր մուտքային հոսքերի ներկայացված արժույթը	Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Սվոփ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Գործարքի կնքման վայրը	Գործարքի փոխհատուցման ենթակա գումարը	Գործարքի կնքման վայրը	Նշումներ
								Ելքային հոսքի արժույթը (ըստ ISO կոդի)	Ելքային հոսքի փոխարժեքով ներկայացված գումարը (ըստ ISO կոդի)	Ելքային հոսքի արժույթը (ըստ ISO կոդի)	Ելքային հոսքի փոխարժեքով ներկայացված գումարը (ըստ ISO կոդի)				
1															
2															
...															

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 10. Արժութային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործարքի կնքողագործակցության համարը	Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի վճարումների ամսաթվերը (հաճախականությունը)	Սվոպի հիմքում ընկած ծառայության ISO կոդը	Սվոպի փոխարժեքը	Ֆոնդային (ցուցիչային) ապրանքը	Գործարքի վճարման արժույթի ISO կոդը	Ակտիվների ձեռքբերման նպատակով կնքված սվոպի գործարքի առկայության փաստը	Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Գործարքի կնքման ժամկետը	Փոխարժեքի տատանողականությունը	Սփոթ փոխարժեքի վիճակագրական վիճակագրության կենտրոնական միտումնային ցուցանիշը	Ֆորվարդի վերջնական վիճակագրական վիճակագրության կենտրոնական միտումնային ցուցանիշը	Գործարքի կնքման ժամը	Կնքողը
									Ընդունած կողմի վճարվելիք գումարը (ծավալը)	Ընդունած կողմի ստացվելիք գումարը (ծավալը)	Ընդունած կողմի վճարվելիք գումարը (ծավալը)	Ընդունած կողմի ստացվելիք գումարը (ծավալը)						

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 11. Տոկոսադրույքային սվոպ գործարքների կնքման վերաբերյալ

Ապահովագրական ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____

N	Գործարքի կնքողագործակցության համարը	Գործարքի կնքման ամսաթիվը	Սվոպի հիմքում ընկած վճարումների (ծավալի) ISO կոդը	Ակտիվների ձեռքբերման նպատակով կնքված սվոպի գործարքի առկայության փաստը	Ստացող կողմի նախնական վճարումների ընդհանուր գումարը	Ստացող կողմի նախնական վճարումների ընդհանուր գումարը	Գործարքի կնքման ժամկետը	Փոխարժեքի տատանողականությունը	Սվոպ փոխարժեքի վիճակագրական վիճակագրության կենտրոնական միտումնային ցուցանիշը	Ֆորվարդի վիճակագրական վիճակագրության կենտրոնական միտումնային ցուցանիշը	Գործարքի կնքման ժամը	Կնքողը

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով վերացնել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ անհարկի տեղեկությունների ներկայացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին» թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4/03) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 4/03-ի 2-րդ կետի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերից հանել «(վարկային կազմակերպության)» բառերը:

2) Կանոնակարգ 4/03-ի 4-րդ կետի աղյուսակի 19-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

3) Կանոնակարգ 4/03-ի 6-րդ, 7-րդ, 10-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

4) Կանոնակարգ 4/03-ի 11-րդ կետում «Վարկային կազմակերպությունները և բանկերը» բառերը փոխարինել «Բանկերը» բառով:

5) Կանոնակարգ 4/03-ի 14-րդ կետից հանել «ներդրումային ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող վարկային կազմակերպությունների համար՝ NV,» բառերը:

6) Կանոնակարգ 4/03-ի 17-րդ կետից հանել «(բացառությամբ Թիվ 6 հաշվետվության 3-րդ աղյուսակի, որում լրացվում են տվյալ պահին առկա տվյալները:)» բառերը:

7) Կանոնակարգ 4/03-ի 20-րդ կետից հանել«, բացառությամբ թիվ 19 հաշվետվության, որը ներկայացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը (ներառյալ)» բառերը:

8) Կանոնակարգ 4/03-ի 28-րդ կետում «, բավարարեն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի «է» կետով սահմանված պահանջներին» բառերը փոխարինել «՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվողականության հիմունքների» (‘The Conceptual Framework for Financial Reporting’(Դ քընսեփչյուըլ ֆրեյմվորք ֆոր ֆայնենշլ րիփորթինգ)) պահանջների» բառերով:

9) Կանոնակարգ 4/03-ի 34-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34. Թիվ 1 հաշվետվությունը լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանով համատեղ հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին» և «ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգին» համապատասխան:»:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀԳՏ N31 (444), 24.12.2012):

10) Կանոնակարգ 4/03-ը լրացնել 34.1-րդ, 34.2-րդ և 34.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«34.1. Թիվ 1 հաշվետվական ձևում «I խմբի արտարժույթ» և «II խմբի արտարժույթ» սյունակներում արտարժույթի խմբավորումն իրականացվում է համաձայն Կանոնակարգ 4/02-ի: «I խմբի արտարժույթ», «II խմբի արտարժույթ» սյունակներում լրացվում են ընկերության՝ արտարժույթով ակտիվների և պարտավորությունների մնացորդները, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և պարտավորությունների մնացորդները: Յուրաքանչյուր արժութային սյունակում ներկայացվող թվերը դասակարգվում են ըստ ռեզիդենտության: Արտարժութային հոդվածները լրացվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված հաշվետու օրվա համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Հաշվետվությունները պարունակում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա (եթե ընկերությունն աշխատել է նաև շաբաթ, կիրակի կամ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրը, ապա՝ այդ օրվա) դրությամբ առկա տվյալները: Ներդրումային ընկերության կողմից ինքնուրույն բացված հաշիվները Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում չեն արտացոլվում որպես առանձին հաշիվ:

34.2. Թիվ 1 հաշվետվության հոդվածներին կից ներկայացված «NV» հապավումով տողում ներկայացվում են տվյալ տողի հիմնական հոդվածում ընդգրկված տվյալ ակտիվի կամ պարտավորության մայր գումարը, իսկ «NI» հապավումով տողում՝ անվանական տոկոսադրույքով հաշվեգրված և դեռ չվճարված տոկոսագումարը:

34.3. Թիվ 1 հաշվետվությունը լրացվում է հազար դրամներով:»:

11) Կանոնակարգ 4/03-ի 49.3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

12) Կանոնակարգ 4/03-ի 52-րդ կետում.

ա. 1-ին ենթակետում ««այլ»» բառը փոխարինել ««ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»» բառերով,

բ. 1.1-րդ ենթակետում ««այլ»» բառը փոխարինել ««ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»» բառերով,

գ. 1.1-րդ ենթակետում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետության կառավարության (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության) կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման աճուրդների դեպքում ձեռքբերված պարտատոմսերի մասին տեղեկությունները լրացնելիս սույն սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որն անմիջականորեն Կենտրոնական բանկից ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության կառավարության (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության) կամ Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերը:» բառերով,

դ. 4-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Տարբերակիչ ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»,

ե. 10-րդ ենթակետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«(ներառյալ՝ այն դեպքերում, երբ հաշվետու ներդրումային ծառայություններ մատուցող անձը տվյալ պարտատոմսերը ձեռք է բերել այլ անձի միջոցով): Այն դեպքում, երբ գործարքի մյուս կողմը հայտնի չէ, մասնավորապես՝ կազմակերպված շուկաներում (բորսաներում, այլընտրանքային առևտրային համակարգերում և այլ նմանատիպ շուկաներում) կնքված գործարքների դեպքում, սույն սյունակում լրացվում է «կազմակերպված շուկա» (բացառությամբ այս շուկաներում կնքված հասցեական գործարքների):»,

զ. 11-րդ ենթակետը «համարը» բառից հետո լրացնել «, որը պետք է լինի առանձնահատուկ (չկրկնվող) յուրաքանչյուր գործարքի համար» բառերով,

է. լրացնել 15-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«15) ***«Միջնորդը»*** սյունակը լրացման է ենթակա միայն օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով օտարերկրյա կազմակերպված շուկայում կամ օտարերկրյա անձի հետ գործարքներ կնքելու դեպքում, որտեղ լրացվում է միջնորդ հանդիսացող ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը:»:

13) Կանոնակարգ 4/03-ի 56-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «՝ հատով» բառը:

14) Կանոնակարգ 4/03-ի 64-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «՝ հատով» բառը:

15) Կանոնակարգ 4/03-ի 75-րդ կետի 1-ին ենթակետը, 77-րդ կետի 3-րդ ենթակետը, 79-րդ կետի 3-րդ ենթակետը և 128-րդ կետի 3-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Տարբերակիչ ծածկագիր կամ պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը (առկայության դեպքում):»:

16) Կանոնակարգ 4/03-ի 76-րդ կետի վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, սույն հաշվետվությունում գործարքները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ հազարներով, որով տեղաբաշխվել են տվյալ արժեթղթերը:»:

17) Կանոնակարգ 4/03-ի 77-րդ կետը լրացնել 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) «Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով տեղաբաշխվել են տվյալ արժեթղթերը:»:

18) Կանոնակարգ 4/03-ի 19-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել:

19) Թիվ 6 հաշվետվության բոլոր աղյուսակների սյունակների վերջում լրացնել նոր սյունակ՝ «Միջնորդը» վերնագրով:

20) Կանոնակարգ 4/03-ի հավելված 9-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

21) Կանոնակարգ 4/03-ի հավելված 20-ը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N298-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 298-Ն որոշմամբ

Հավելված 9

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝
Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,
դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

(հազար)

N	Տեղադիրքի կոդը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի ֆիրմայի/կազմակերպության անվանումը, որին վերաբերում է գրառումը	Թողարկողի հետ կնքված պայմանագրի ամսաթիվը	Պայմանագրով նախատեսված տեղաբաշխման			Հաշվետու ժամանակաշրջանում տեղաբաշխված արժեթղթերի			
						Միավորի վճարվելիք գումարը (գրավոր հայտի դեպքում)	Ընդհանուր տրամաբանական վճարվելիք գումարը (դրամական արտահայտությամբ)	Միավորի վճարվելիք գումարը	Միավոր	Ընդհանուր տրամաբանական	Միավորի վճարված գումարը, իսկ գրավոր հայտի դեպքում՝ ընդհանուր տրամաբանական	Ընդհանուր ISO վճարված

Ներդրումային ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմնի ղեկավար _____

Կ. Տ.

Գլխավոր հաշվապահ _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի հաշվարկման նպատակով Կենտրոնական բանկի համար ապահովել անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև վերացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ անհարկի տեղեկությունների ներկայացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 141-րդ և 207-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ը հաստատելու մասին թիվ 356-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետի 11-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգի 5-րդ կետի աղյուսակում.

ա. 13-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

բ. լրացնել 14-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

14	Հաշվետվություն պետական պարտատոմսերի առք ու վաճառքի գնանշումների միջին օրական եկամտաբերությունների վերաբերյալ	օրական

»:

3) Կանոնակարգի 6-րդ կետի 1-ին նախադասության մեջ «ՀԱՎԵԼՎԱԾ 8» բառերը փոխարինել «ՀԱՎԵԼՎԱԾ 10» բառերով:

4) Կանոնակարգի 11-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու օրվա ժամը 17:00-ն, որում ներառվում են հաշվետու օրվա ընթացքում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունները:»:

5) Կանոնակարգի 13-րդ կետի վերջին նախադասությունը հանել:

6) Կանոնակարգի 27.1-րդ, 27.2-րդ, 27.3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27.1. Թիվ 6 հաշվետվության առաջին աղյուսակում լրացվում են կարգավորվող շուկայում արժեթղթերի առուվաճառքի գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է գործարքների կնքման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (օրինակ՝ 01/01/2013)**:**

2) ***«Գնորդը ում հաշվին է գործարքը կնքել»*** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի հաշվին գնորդը կնքել է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»:

3) ***«Գնորդի կոդը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի ներքո արժեթղթի գնորդին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:

4) ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի կնքման ժամը՝ ժամ:րոպե:վայրկյան հաջորդականությամբ (13:50:55):

5) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»:

6) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.12.2012 թ. (ՀՀՊՏ N31 (444), 24.12.2012):

շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Օտարերկրյա արժեթղթերի դեպքում նշվում է օտարերկրյա իրավասու մարմնի կողմից արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում): Տարբերակիչ ծածկագիր և պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է Օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:

7) ***«Միավոր արժեթղթի գինը»*** սյունակում լրացվում է մեկ արժեթղթի առուվաճառքի (տեղաբաշխման հարթակում գործարքների կնքման դեպքում՝ տեղաբաշխման) գինը: Ծավալային արժեթղթերի (արժեթղթեր, որոնք չունեն քանակ, այլ միայն ծավալ, օրինակ՝ պետական արժեթղթերը) համար սույն սյունակը չի լրացվում:
8) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքով գնված կամ վաճառված արժեթղթերի քանակը հատերով, ընդ որում, ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
9) ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է միավոր արժեթղթի գնի և գործարքի առարկա արժեթղթերի քանակի արտադրյալը: Ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է ծավալային արժեթղթերով կնքված գործարքի ընդհանուր գինը:
10) ***«Գործարքի արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:
11) ***«Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը»*** սյունակում լրացվում է ոչ ծավալային արժեթղթերի դեպքում միավոր արժեթղթի գնի, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում գործարքի ընդհանուր գումարի հիման վրա հաշվարկված տարեկան եկամտաբերությունը՝ հաշվարկված թողարկողի կողմից տվյալ արժեթղթի թողարկման և (կամ) տեղաբաշխման պայմաններով սահմանված բանաձևով՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ: Սույն ենթակետում նշված սյունակը չի լրացվում այն արժեթղթերի համար, որոնց համար նախատեսված չէ եկամտաբերության հաշվարկ (օրինակ՝ հասարակ բաժնետոմսերի, բաժնեմասերի, ներդրումային ֆոնդերի փայերի կամ դրանցում մասնակիցների բաժնեմասը հավաստող նման այլ փաստաթղթերի համար և այլն): Ընդ որում, տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է գործարքի կնքման օրվա դրությամբ:
12) ***«Վաճառողի կոդը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի ներքո արժեթղթի վաճառողին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:
13) ***«Վաճառողը ում հաշվին է գործարքը կնքել»*** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի հաշվին վաճառողը կնքել է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «այլ»:
14) ***«Շուկայի տեսակը»*** սյունակում նշվում է կարգավորվող շուկայի կողմից Օրենքով և իր կանոններով սահմանված կարգով կազմակերպվող այն շուկայի անվանումը, որտեղ տվյալ գործարքը կնքվել է:
15) ***«Շուկայի հարթակը»*** սյունակում նշվում է կարգավորվող շուկայի կողմից կազմակերպվող շուկայի այն հարթակի անվանումը, որտեղ տվյալ գործարքը կնքվել է, եթե կարգավորվող շուկայի կողմից կազմակերպվող տվյալ շուկայի համար համապատասխան հարթակ նախատեսված է:
16) ***«Գործարքին տրված հերթական տարբերակիչ համարը»*** սյունակում լրացվում է առևտրային համակարգում տվյալ գործարքին տրված կոդը:

27.2. Թիվ 6 հաշվետվության երկրորդ աղյուսակում լրացվում են կարգավորվող շուկայում վարկային ռեսուրսներով կնքված գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է գործարքների կնքման ամսաթիվը օր/ամիս/տարի ֆորմատով (օրինակ՝ 01/01/2013)**:**
2) ***«Գործարքի արժույթի ISO կոդ»*** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված է վարկային ռեսուրսը:
3) ***«Գործարքի գումարը»*** սյունակում լրացվում է վարկային ռեսուրսով կնքված գործարքով տրամադրվող վարկային ռեսուրսի (դրամական միջոցների) գումարը:
4) ***«Տարեկան տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է վարկային ռեսուրսներով կնքված տվյալ գործարքի տարեկան անվանական տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:
5) ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի կնքման ժամը՝ ժամ:րոպե:վայրկյան հաջորդականությամբ (օրինակ՝ 13:50:55):
6) ***«Գործարքի կատարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է վարկային ռեսուրսով կնքված տվյալ գործարքով նախատեսված վարկային ռեսուրսի փաստացի տրամադրման (վերջնահաշվարկի) օրվա ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (օրինակ՝ 01/01/2013):

7) ***«Գործարքի մարման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է վարկային ռեսուրսով կնքված տվյալ գործարքով նախատեսված հիմնական (մայր) գումարի և հաշվեգրված տոկոսների հետվճարման (վերջնահաշվարկի) ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (օրինակ՝ 01/01/20130):
8) ***«Տեղաբաշխող»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի պայմանների համաձայն վարկային ռեսուրս տրամադրողին (վարկային ռեսուրսի տեղաբաշխողին) Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:
9) ***«Շուկայի հարթակը»*** սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի օպերատորի կողմից կազմակերպվող վարկային ռեսուրսների շուկայի այն հարթակի անվանումը, որտեղ տվյալ գործարքը կնքվել է:
10) ***«Ներգրավող»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի պայմանների համաձայն վարկային ռեսուրս ստացողին (վարկային ռեսուրսի ներգրավողին) Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:
11) ***«Վարկային ռեսուրսի հապավումը»*** սյունակում լրացվում է օպերատորի կողմից վարկային ռեսուրսին տրված հապավումը:
12) ***«Գործարքին տրված հերթական տարբերակիչ համարը»*** սյունակում լրացվում է առևտրային համակարգում տվյալ գործարքին տրված կոդը:

27.3. Թիվ 6 հաշվետվության երրորդ աղյուսակում լրացվում են կարգավորվող շուկայում կնքված ռեպո-ուղղակի գործարքների վերաբերյալ տեղեկությունները՝ հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է գործարքների կնքման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (օրինակ՝ 01/01/2013)**:**
2) ***«Գնորդը ում հաշվին է գործարքը կնքել»*** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի հաշվին գնորդը կնքել է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «այլ»:
3) ***«Գնորդի կոդը»*** սյունակում լրացվում է տվյալ ռեպո գործարքի ներքո արժեթղթի գնորդին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:
4) ***«Գործարքի կնքման ժամը»*** սյունակում լրացվում է տվյալ գործարքի կնքման ժամը՝ ժամ:րոպե:վայրկյան հաջորդականությամբ (13:50:55):
5) ***«Գործարքի բնույթը»*** սյունակում նշվում է «նոր կնքված», «երկարաձգված», «կրճատված» կամ «այլ»: Ընդ որում, նոր գործարք կնքվելու դեպքում նշվում է «նոր կնքված», արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի կրճատման դեպքում (անկախ այն հանգամանքից՝ այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «կրճատված», երկարաձգման դեպքում (անկախ այն հանգամանքից այլ պայմաններ փոխվել են, թե ոչ)՝ «երկարաձգված», իսկ արդեն կնքված գործարքների գործողության ժամկետի փոփոխությունների հետ չկապված այլ պայմանների փոփոխության դեպքում նշվում է «այլ»:
6) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է «բաժնային» կամ «ոչ բաժնային»:
7) ***«Գործարքի առարկա արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքում ներառված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում թողարկված ոչ պետական արժեթղթերի դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհված արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը: Պետական արժեթղթերի դեպքում նշվում է դրանց թողարկման պետական գրանցման համարը: Օտարերկրյա արժեթղթերի դեպքում նշվում է օտարերկրյա իրավասու մարմնի կողմից արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում): Տարբերակիչ ծածկագիր և պետական գրանցման համար չունենալու դեպքում նշվում է Օպերատորի կողմից արժեթղթին տրված հապավումը:
8) ***«Քանակը»*** սյունակում լրացվում է տվյալ ռեպո գործարքում ներառված արժեթղթերի քանակը՝ հատերով, ընդ որում, ծավալային արժեթղթերի համար սույն սյունակը չի լրացվում:
9) ***«Ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է ռեպո պայմանագրով սահմանված ռեպո-ուղղակի գործարքի ընդհանուր գումարը:
10) ***«Գործարքի արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է գործարքով վճարման միջոց հանդիսացող արժույթի կոդը:
11) ***«Ռեպո տոկոսադրույքը (տարեկան)»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո գործարքի տարեկան (տարին՝ 365 կամ 366 օր՝ կախված տվյալ ռեպո գործարքի կնքման օրվանից մինչև հաջորդ տարվա նույն օրվան նախորդող օրը ընկած ժամանակահատվածում առկա օրերի քանակը 365 է, թե 366) տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ: Այն դեպքում,

երբ տոկոսադրույք վճարողն արժեթղթերի գնորդն է, տոկոսադրույքը լրացվում է բացասական նշանով:

12) **«Վաճառողի կոդը»** սյունակում լրացվում է տվյալ ռեպո գործարքի ներքո արժեթղթի վաճառողին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը:

13) **«Վաճառողը ում հաշվին է գործարքը կնքել»** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի հաշվին վաճառողը կնքել է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «այլ»:

14) **«Ռեպո-ուղղակի գործարքի տարբերակիչ համարը»** սյունակում լրացվում է ռեպո գործարքին օպերատորի կողմից տրված հերթական տարբերակիչ համարը:»:

7) Կանոնակարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետից հանել.

«, մասնավորապես՝

«1» - «ցուցակված բաժնետոմսերի հարթակ»,

«2» - «ցուցակված պարտատոմսերի հարթակ»,

«3» - «ազատ շուկայի գործիքների հարթակ»,

«4» - «դրամական շուկայի գործիքների հարթակ»,

«5» - «պետական պարտատոմսերի հարթակ»,

«6» - «արտարժույթի հարթակ»,

«7» - «հասցեական գործարքների հարթակ»,

«8» - «ռեպո գործարքների հարթակ»,

«9» - «արժեթղթերի տեղաբաշխման հարթակ»,

«10» - «վարկային ռեսուրսների հարթակ»:

Եթե, օրինակ, մասնակցին (անդամին) թույլտվություն է տրամադրվել գործարքներ կնքել միայն ցուցակված բաժնետոմսերի հարթակում, ապա սույն սյունակում լրացվում է «1/ / / / / / /», եթե ցուցակված պարտատոմսերի հարթակում և ազատ շուկայի գործիքների հարթակում, ապա՝ «/ /2/3/ / / /», և այլն» բառերը:

8) Կանոնակարգի 31-րդ կետի 7-րդ ենթակետից հանել.

«մասնավորապես՝

«1» - «ցուցակված բաժնետոմսերի հարթակ»,

«2» - «ցուցակված պարտատոմսերի հարթակ»,

«3» - «ազատ շուկայի գործիքների հարթակ»,

«4» - «դրամական շուկայի գործիքների հարթակ»,

«5» - «պետական պարտատոմսերի հարթակ»,

«6» - «արտարժույթի հարթակ»,

«7» - «հասցեական գործարքների հարթակ»,

«8» - «ռեպո գործարքների հարթակ»,

«9» - «արժեթղթերի տեղաբաշխման հարթակ»,

«10» - «վարկային ռեսուրսների հարթակ»:

Եթե, օրինակ, տվյալ մասնակցի (անդամի) կողմից գործարքներ կնքելու թույլտվությունը կասեցվել է միայն ցուցակված բաժնետոմսերի հարթակում, ապա սույն սյունակում լրացվում է «1/ / / / / / /», իսկ եթե ցուցակված պարտատոմսերի հարթակում և ազատ շուկայի գործիքների հարթակում, ապա՝ « /2/3/ / / / » և այլն» բառերը:

9) Կանոնակարգի 37-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) **«Կարգավորվող շուկայի մասնակիցը (անդամը) ում հաշվին է գործարք կնքում»** սյունակում լրացվում է այն անձի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որի հաշվին կարգավորվող շուկայի մասնակիցը կնքելու է գործարքը, կոդի բացակայության դեպքում լրացվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»:»:

10) Կանոնակարգի 37.2-րդ կետում.

ա. 4-րդ և 9-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) **«Շուկայի այն մասնակցի՝ Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որին ուղարկվում է հասցեական առաջարկը»** սյունակում լրացվում է Կենտրոնական բանկի կողմից առևտրի այն մասնակցին շնորհված կոդը, որին ուղարկվում է գործարքի (ռեպո գործարքի) կնքման հասցեական առաջարկը:»:

11) Կանոնակարգի 12-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել:

12) Կանոնակարգը լրացնել նոր՝ 13-րդ գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 13. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՆԱՆՇՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՕՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 14 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

43. Թիվ 14 հաշվետվության մեջ լրացվում են հաշվետու օրվա առևտրային նստաշրջանի ընթացքում գնանշված պետական պարտատոմսերի առք ու վաճառքի գնանշումների միջին օրական եկամտաբերությունների վերաբերյալ տեղեկությունները:

44. Թիվ 14 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Հաշվետու օր»*** մասում լրացվում է պետական պարտատոմսերի գնանշումների միջին օրական եկամտաբերությունների հաշվարկման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով (օրինակ՝ 01/01/2013):
2) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է տվյալ հաշվետու օրվա առևտրային նստաշրջանի ընթացքում գնանշված պետական պարտատոմսերի թողարկման պետական գրանցման համարները:
3) ***«Տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր տրանշի պետական պարտատոմսի տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով, որը որոշվում է հետևյալ եղանակով. տվյալ օրվա առևտրային նստաշրջանի ընթացքում՝ ժամը 11:10-ի, 12:00-ի, 13:00-ի, 14:00-ի և 15:00-ի դրությամբ, ֆիքսվում են տվյալ պետական պարտատոմսի լավագույն գնման և վաճառքի գնանշվող տարեկան եկամտաբերությունները և հաշվարկվում դրանց միջին արժեքը, այնուհետև հաշվարկվում է տվյալ միջին արժեքների միջինը: Եթե նշված ժամերից որևէ ժամի դրությամբ սահմանված չեն լավագույն առքի կամ վաճառքի տարեկան եկամտաբերություններ, ապա այդ պարտատոմսի համար տարեկան եկամտաբերության՝ միջին օրական հաշվարկն իրականացվում է առանց այդ ժամի տվյալի դիտարկման:»:
   1) Կանոնակարգի Հավելված 2-ը և Հավելված 7-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի և Հավելված 2-ի:
   2) Կանոնակարգի Հավելված 9-ը հանել:
   3) Կանոնակարգը լրացնել Հավելված 10-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
8 նոյեմբերի 2012 թ., N299-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 299-Ն որոշմամբ

Հավելված 2

«Կարգավորվող շուկայի օպերատորի՝
կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,
դրանց ներկայացման կարգը, ծևը և ժամկետները»
կանոնակարգ 5/03-ի հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(օրական)

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

Աղյուսակ 1. Արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ

N	Գնորդ հանդիսացող կողմի զբաղեցրած դիրքը	Գնորդի կոդը	Գործարքի կնքման ամսաթիվը	Արժեթղթի անվանումը	Արժեթղթի միասնական համարանիշը	Միասնական գինը	Քանակը	Ընդհանուր գումարը	Գործարքի կնքման ISO կոդը	Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը	Վաճառող	Միջնորդը	Վաճառող հանդիսացող կողմի զբաղեցրած դիրքը	Հուկայի տեսակը	Հուկայի միջոցը	Գործարքին մասնակցող միջնորդի համարանիշը	Ընդհանուր գումարը հիմնադրամների համար
1																	
2																	
3																	
..																	

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 2. Վարկային ռեսուրսներով կնքված գործարքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Գործարքի կնքման ISO կոդը	Գործարքի կոդը	Տրամադրման ենթակա գումարը	Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի մարման ենթակա գումարը	Տեղաբաշխող	Հուկայի միջոցը	Կիրառվող	Գործարքին մասնակցող միջնորդի համարանիշը	Գործարքին մասնակցող հիմնադրամների համար ընդհանուր գումարը
1										
2										
...										

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____

Գլխավոր հաշվապահ _____

Աղյուսակ 3. Ռեպո գործարքների վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Գնային ազդանշաններ	Գնի փոփոխություն	Գործարքի կնքման ժամ	Գործարքի կնքում	Առուվաճառք	Հիմնադրման պայմանագրի ստորագրում	Գործարքի ժամկետ	Ընդհանուր գումար	Գործարքի արժույթ ISO կոդի	Տոկոսադրույքի սահմանափակումներ	Հաշվարկման ամսաթիվ	Գործարքի կնքման ամսաթիվ	Փոխհատուցման ամսաթիվ	Կողմ	Գնահատական	Ազատ միջոցների ներգրավում	Անորոշ հիմունքներով վճարումներ
1																	
2																	
3																	
...																	

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____

Գլխավոր հաշվապահ _____

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 299-Ն որոշմամբ

Հավելված 7

«Կարգավորվող շուկայի օպերատորի՝
կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,
դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
կանոնակարգ 5/03-ի հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ (ԱՆԴԱՄՆԵՐԻ) ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(օրական)

Աղյուսակ 1. Արժեթղթերի առուվաճառքի հայտերի վերաբերյալ

Օպերատորի անվանումը _____

Հաշվետու օր _____

N	Հայտի տառեբեռակիչ ծածկագիրը	Հայտը ներկայացրած մասնակցի (անդամի) կենտրոնական կողմից շնորհված կոդը	Հայտը ներկայացրած մասնակցի (անդամի) կողմից կամ հաշվին գործող այլ անձի կողմից է գործարքը կնքում	Հայտով նախատեսված գործարքի տեսակը	Արժեթղթերի տարեբեռակիչ ծածկագիրը	Արժեթղթի դասը	Արժույթի ISO կոդը	Միավոր արժեթղթի գինը	Արժեթղթերի քանակը	Ընդհանուր գումարը	Հայտի տեսակը՝ նախկին գծային պայմանագրերից	Հայտի տեսակը՝ նախկին գծային պայմանագրերից	Հայտի տեսակը՝ նախկին գծային պայմանագրերից	Հայտի տեսակը՝ նախկին տոկոսադրույքային պայմանագրերից	Կարգավորվող շուկայի մասնակցի հաճախորդի (երբ հաճախորդի կողմից է կնքվում գործարքը) կողմից ներկայացվել է հաշվառողի հաշվին	Գործարքը ըստ տեսակի	Հայտի ընդհանրացված բովանդակությունը	Գործարքը ըստ նպատակի

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ.Տ.

Աղյուսակ 2. Առուվաճառքի և ռեպո գործարքների հասցեական առաջարկների վերաբերյալ

Օպերատորի անվանումը ________________________

Հաշվետու օր ______________________________

N	Հասցեական առաջարկով նախատեսվող գործարքի տարբերակիչ համարը	Հասցեական առաջարկ ներկայացրած մասնակցին (անդամին) Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը	Կարգավորվող շուկայի մասնակիցը (անդամը) ում հաշվին է գործարք կնքում	Հասցեական առաջարկով նախատեսված գործարքի տեսակը	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը	Արժեթղթի դասը	Արժեթղթերի քանակը	Արժույթի ISO կոդը	Հասցեական առաջարկում ներառված գործարքի (ռեպո-ուղղակի գործարքի) ընդհանուր գումարը	Ռեպո տոկոսադրույքը (տարեկան)	Կարգավորվող շուկայի հաճախորդի ծածկագիրը (եթե հայտը ներկայացվել է շուկայի մասնակցի հաճախորդի հաշվին)	Գործողության տեսակը	Հասցեական առաջարկի ներկայացման ժամը	Գործողության կատարման ժամը	Ռեպո գործարքի մարման ամսաթիվը	Շուկայի այն մասնակցին Կենտրոնական բանկի կողմից շնորհված կոդը, որին ուղարկվում է հասցեական առաջարկը

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար ________________________

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ ________________________

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 299-Ն որոշմամբ

ՀԱՎԵԼՎԱԾ 10

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշմամբ
հաստատված Կանոնակարգ 5/03-ի հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

Պետական պարտատոմսերի առք ու վաճառքի գնանշումների տարեկան եկամտաբերությունների միջին օրական հաշվարկի վերաբերյալ

(օրական)

Օպերատորի անվանումը ________________________

Հաշվետու օր ______________________________

	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Տարեկան եկամտաբերությունը՝ միջին օրական հաշվարկով
1		
2		
3		
...		

Օպերատորի գործադիր մարմնի ղեկավար ________________________

Գլխավոր հաշվապահ ________________________

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով վերացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ անհարկի տեղեկությունների ներկայացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 182-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ը հաստատելու մասին» թիվ 357-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 5/04) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 5/04-ի 2-րդ կետը «ճշտությամբ» բառից հետո լրացնել «, եթե սույն կանոնակարգով այլ կարգ սահմանված չէ» բառերով:

2) Կանոնակարգ 5/04-ի 5-րդ կետի աղյուսակի 14-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

3) Կանոնակարգ 5/04-ի 12-րդ կետի վերջին նախադասությունը հանել:

4) Կանոնակարգ 5/04-ի 25-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն հաշվետվությունում դրամական միջոցների փոխադարձ պահանջների և պարտավորությունների մեծությունները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն), որով կնքվել են գործարքները:»:

5) Կանոնակարգ 5/04-ի 27-րդ կետը լրացնել 9-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) «Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված են մինչև առևտրային նստաշրջանը դեպոնացված, առևտրային նստաշրջանից հետո մնացած դրամական միջոցները և (կամ) վճարման կամ ստացման ենթակա դրամական միջոցները:»:

6) Կանոնակարգ 5/04-ի 28-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն), որով կնքվել են գործարքները:»:

7) Կանոնակարգ 5/04-ի 29-րդ կետը լրացնել 11-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) «Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով կնքվել է գործարքը:»:

8) Կանոնակարգ 5/04-ի 36-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն հաշվետվությունում տվյալները լրացվում են այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն), որով արտահայտված է փոխանցված արժեթղթի (արժեթղթերի) անվանական արժեքը:»:

9) Կանոնակարգ 5/04-ի 37-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) «Արժույթի ISO կոդը սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված է փոխանցված արժեթղթի (արժեթղթերի) անվանական արժեքը:»:

10) Կանոնակարգ 5/04-ի 13-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել:

11) Կանոնակարգ 5/04-ի հավելված 2-ի աղյուսակ 1-ի և աղյուսակ 2-ի «ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ» սյունակում լրացնել նոր սյունակ՝ «Արժույթի ISO կոդը» վերնագրով:

12) Կանոնակարգ 5/04-ի հավելված 3-ի աղյուսակ 1-ում և աղյուսակ 2-ում.

ա. հանել «(ՀՀ դրամ)» բառերը,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
	Հաշիվին դրամարկղում (դրամով, դրամային փոխարժեքով չարժեցված)	Հաշիվին ընթացիկ հաշիվներում	Բանկում (այլ վարկային կազմակերպություններում) տեղաբաշխված ժամկետային ավանդներ	Դեպոզիտարիայում գտնվող պետական արժեթղթեր, որոնց նկատմամբ սահմանված չէ ծանրության գործակից	Դեպոզիտարիայում գտնվող պետական արժեթղթեր, որոնց նկատմամբ սահմանված է ծանրության գործակից (տոկոսներով)	Կենցաղային նշանակության վճարակ ստանալու իրավունքով ձեռք բերված պահանջներ	Դեպոզիտարիայում գտնվող ֆինանսական գործիքներ, որոնց նկատմամբ սահմանված է ծանրության գործակից (տոկոսներով)*	Օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերում ընթացիկ հաշիվներ	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	Օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերում ժամկետային ավանդներ	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	Օտարերկրյա բանկերում ընթացիկ հաշիվներ (այդ թվում՝ ստորգետնյա)	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	Օտարերկրյա բանկերում ժամկետային ավանդներ	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	ՀՀ կառավարության արժեթղթեր, որոնց նկատմամբ սահմանված է ծանրության գործակից (տոկոսներով)	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	Վերաֆինանսավորման կամ կրեդիտային գծերի միջոցներով ձեռք բերված պարտատոմսեր, որոնց նկատմամբ սահմանված է ծանրության գործակից (տոկոսներով)	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	Բանկային հաշիվներ (այդ թվում՝ ստորգետնյա) ՀՀ տարածքում գտնվող բանկերում	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	Ցպահանջ ավանդներ ՀՀ տարածքում գտնվող բանկերում	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	Ժամկետային ավանդներ ՀՀ տարածքում գտնվող բանկերում	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	ՀՀ տարածքում գտնվող բանկերի տրամադրած փոխառություններ	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	ՀՀ տարածքում գտնվող ապահովագրական ընկերությունների ապահովագրական պահուստներում գտնվող ակտիվներ	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	ՀՀ տարածքում գտնվող վերաապահովագրական ընկերությունների ապահովագրական պահուստներում գտնվող ակտիվներ	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	ՀՀ տարածքում գտնվող կենսաթոշակային ընկերությունների կենսաթոշակային պահուստներում գտնվող ակտիվներ	(ձեկ սուբյեկտով)	(բոլոր սուբյեկտներով)	Տեխնիկական պահուստներին համարժեք բոլոր և առանձին վերցված ակտիվների նորմատիվի վերջնամսյան մեծությունը (իլափոշ)
1																																				
2																																				
3																																				
4																																				
5																																				
6																																				
7																																				
8																																				
9																																				
10																																				
11																																				
12																																				
13																																				
14																																				
15																																				
16																																				
17																																				
.....																																				
30																																				
31																																				
Ամսվա վերջում ըստ համապատասխան տեսակի ակտիվների հաշվարկված մեծությունը																																				×

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ _____
(Գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

Պատասխանատու ակտուար _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ներդրումային ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները համապատասխանեցնել ներդրումային ընկերությունների նորմատիվների հաշվարկման համակարգում կատարված փոփոխություններին,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ը հաստատելու մասին» թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4/03) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 4/03-ի 39.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«***39.5. 3-րդ աղյուսակում*** ներկայացվում են վարկային ռիսկի հաշվարկը՝ ըստ օրերի: Ընդ որում, 3-րդ աղյուսակում չեն ներկայացվում այն ակտիվները, որոնց վրա տարածվում է վարկային ռիսկի զսպման մեխանիզմը (այսուհետ՝ ՎՌԶՄ): 3-րդ աղյուսակի 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ սյունակներում լրացվում են ըստ ռիսկի կշիռների խմբավորված ակտիվների հանրագումարները՝ հազար դրամներով, իսկ 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ և 20-րդ սյունակներում՝ համապատասխան ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստների մեծությունները՝ հազար դրամներով: 21-րդ սյունակում ամփոփվում է այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չի տարածվում ՎՌԶՄ-ն:»:

2) Կանոնակարգ 4/03-ի 39.7 կետի 5-րդ ենթակետում.

ա. 1-ին պարբերությունում «5-ից 11-րդ» բառերը փոխարինել «5-ից 14-րդ» բառերով,

բ. 2-րդ պարբերությունում «8-րդ սյունակում» բառերը փոխարինել «9-րդ սյունակում» բառերով, իսկ «10-րդ սյունակում» բառերը՝ «11-րդ սյունակում» բառերով:

3) Կանոնակարգ 4/03-ի 39.7 կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«***6) 15-րդ*** սյունակում ամփոփվում է ՎՌԶՄ-ի ենթակա այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց մեծությունը չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով:»:

4) Կանոնակարգ 4/03-ի 39.9 կետի 5-րդ ենթակետում.

ա. 1-ին պարբերությունում «5-ից 11-րդ» բառերը փոխարինել «5-ից 14-րդ» բառերով,

բ. 2-րդ պարբերությունում «8-րդ սյունակում» բառերը փոխարինել «9-րդ սյունակում» բառերով:

5) Կանոնակարգ 4/03-ի 39.9 կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«***6) 15-րդ*** սյունակում ամփոփվում է ՎՌԶՄ-ի ենթակա այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց մեծությունը ճշգրտվում է արժեքի տատանման գործակիցներով:»:

6) Կանոնակարգ 4/03-ի 39.11 կետում.

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ***«Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (դրամային հոդվածներ)»*** և ***«Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (արտարժութային հոդվածներ)»*** սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների մեծությունը՝ հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով՝ հազար դրամներով:»,

բ. 5-րդ ենթակետում ««7 - 13-րդ» սյունակներում» բառերը փոխարինել ««7-ից 19-րդ» սյունակներում լրացվում են» բառերով,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 27-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.12.2012 թ. (ՀՀՊՏ N31 (444)[1], 27.12.2012):

գ. լրացնել 6-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) ***20-րդ*** սյունակում ամփոփվում է այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չեն տարածվում ՎՌՋՄ-ները:»:

7) Կանոնակարգ 4/03-ի 39.13 կետում լրացնել 3-րդ և 4-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«***3) «12-ից 21-րդ»*** սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների մեծությունները՝ հազար դրամներով, փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորված ըստ ռիսկի կշիռների: ՎՌՋՄ կիրառման դեպքում հետհաշվեկշռային հոդվածի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի ռիսկի կշռին համապատասխան սյունակում:

4) 22-րդ սյունակում ամփոփվում է այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գծով վարկային ռիսկը, որոնց վրա տարածվում են ՎՌՋՄ-ները:»:

8) Կանոնակարգ 4/03-ը լրացնել 39.13.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«39.13.1. ***7.1-րդ աղյուսակում*** վարկային ռիսկի հաշվարկման նպատակով ներկայացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջները՝ ներառյալ ածանցյալ գործիքները և (կամ) երաշխավորությունները (այդ թվում՝ այլ անձանց նկատմամբ պահանջների այն մասը, որոնք ՎՌՋՄ կիրառման արդյունքում պետք է ստանան ներդրումային ֆոնդերի համար նախատեսված ռիսկի կշիռները): Սույն աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Ամսվա օրեր»*** սյունակը լրացվում է ըստ հաշվետու ամսվա օրերի հաջորդականության (1, 2, 3, … 31, որտեղ «1»-ը համընկնում է ամսվա առաջին օրվան, «2»-ը՝ երկրորդ օրվան և այլն): Ընդ որում, եթե միևնույն օրվա հաշվարկում առկա են տարբեր ռիսկի կշիռ ունեցող ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջներ, ապա այդ պահանջների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են առանձին տողերով:

2) ***«Ռիսկի կշիռը»*** սյունակում լրացվում է Կանոնակարգ 4/02-ի համաձայն հաշվարկված ներդրումային ֆոնդի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:

3) ***3-րդ*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդերի նկատմամբ այն պահանջների մեծությունը՝ հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո, որոնց վրա չեն տարածվում ՎՌՋՄ-ները:

4) ***4-րդ*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդերի նկատմամբ ՎՌՋՄ-ին ենթակա այն պահանջների մեծությունները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց հետո, որոնք չեն ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով: Ընդ որում, տվյալ պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 4-րդ աղյուսակի 1-ից 4-րդ սյունակներում, իսկ այդ պահանջների ռիսկով կշռված մեծությունը՝ 4-րդ աղյուսակի 15-րդ սյունակում:

5) ***5-րդ*** սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ ՎՌՋՄ-ի ենթակա այն պահանջների մեծությունները, որոնք ճշգրտվում են արժեքի տատանման գործակիցներով: Ընդ որում, տվյալ պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 5-րդ աղյուսակի 1-ից 4-րդ սյունակներում, իսկ այդ պահանջների ռիսկով կշռված մեծությունը՝ 5-րդ աղյուսակի 15-րդ սյունակում:

6) ***6-րդ*** սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի գծով այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գումարները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց և ՎՌՓԳ կիրառելուց հետո, որոնց վրա չի տարածվում ՎՌՋՄ-ն: Ընդ որում, հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 6-րդ աղյուսակի 1-ից 9-րդ սյունակներում, իսկ դրանց ռիսկով կշռված մեծությունը՝ 6-րդ աղյուսակի 20-րդ սյունակում:

7) ***7-րդ*** սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի գծով այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գումարները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց և ՎՌՓԳ կիրառելուց հետո, որոնց վրա տարածվում է ՎՌՋՄ-ն: Ընդ որում, հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 7-րդ աղյուսակի 1-ից 11-րդ սյունակներում, իսկ դրանց ռիսկով կշռված մեծությունը՝ 7-րդ աղյուսակի 22-րդ սյունակում: Եթե 1-ին սյունակում լրացվող հաշվետու ամսվա օրերը և 2-րդ սյունակում լրացվող ռիսկի կշիռները համընկնում են, ապա 7.1-րդ աղյուսակի 3-ից 7-րդ սյունակներում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջների մեծությունների հանրագումարները: Այն դեպքում, երբ ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջները կամ դրանց մի մասը ՎՌՋՄ կիրառման արդյունքում պետք է ստանան այլ

անձանց համար նախատեսված ռիսկի կշիռները, ապա այդ պահանջները չեն լրացվում 7.1 աղյուսակում և լրացվում են 4-րդ, 5-րդ կամ 7-րդ աղյուսակներում:»:

9) Կանոնակարգ 4/03-ի 75-րդ կետում՝

ա. առաջին պարբերության վերջին նախադասությունը հանել,

բ. 4-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն սյունակը լրացվում է այն արժույթով (Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով և այլն)՝ հազարներով, որով արտահայտված է տվյալ արժեթղթի անվանական արժեքը:»,

գ. լրացնել 4.1 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1) «Արժույթի ISO կոդը» սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված է տվյալ արժեթղթի անվանական արժեքը:»,

դ. 6-րդ ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում՝ սույն սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ հազարներով:»:

10) Կանոնակարգ 4/03-ի հավելված 3-ի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ աղյուսակները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար սույն որոշման հավելված 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի և 5-ի:

11) Կանոնակարգ 4/03-ի հավելված 3-ը լրացնել 7.1 աղյուսակով՝ համաձայն սույն որոշման հավելված 6-ի:

12) Կանոնակարգ 4/03-ի հավելված 8-ում.

ա. «(հազար դրամ)» բառերը փոխարինել «(հազար)» բառով,

բ. աղյուսակի «Արժեթղթերի ծավալն անվանական արժեքով» սյունակից հետո լրացնել «Արժույթի ISO կոդը» սյունակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող վեցամսյա ժամկետին հաջորդող ամսվա 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 դեկտեմբերի 2012 թ., N330-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 330-Ն որոշմամբ

Աղյուսակ 3. Վարկային ռիսկի հաշվարկը (ակտիվներ, որոնց վրա չեն տարածվում ՎՌՋՄ-ները)

Ներդրումային ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

(հզ. դրամ)

Ամսվա օրերը	Ռիսկի 0 % կշիռ ունեցող	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 10 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 20 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 30 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 50 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 75 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 100 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 110 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 150 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 225 % կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Վարկային ռիսկ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
1																					
2																					
3																					
4																					
5																					
6																					
7																					
8																					
9																					
10																					
11																					
12																					
13																					
14																					
15																					
16																					
17																					
18																					
19																					
20																					
21																					
22																					
23																					
24																					
25																					
26																					
27																					
28																					
29																					
30																					
31																					
Միջին																					

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսների 27-ի թիվ 330-Ն որոշմամբ

Աղյուսակ 4. Վարկային ռիսկի հաշվարկը (ՎՌՋՄ ենթակա ակտիվներ, որոնց մեծությունը չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով)

Ներդրումային ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

(հազար դրամ)

Ամսվա օրերը	ՎՌՋՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ակտիվների մեծությունը, որոնց գծային կշիռը ՎՌՋՄ կիրառման արդյունքում փոխվել է	ՎՌՋՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը	Ռիսկի 0% կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 10% կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 20% կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 30% կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 50% կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 75% կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 100 % կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 110 % կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 150 % կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	Ռիսկի 225 % կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ընդունելուց հետո	ՎՌՋՄ ենթակա ակտիվների փոխարժեքի փոփոխության գծով
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															0
2															0
3															0
4															0
5															0
6															0
7															0
8															0
9															0
10															0
11															0
12															0
13															0
14															0
15															0
16															0
17															0
18															0
19															0
20															0
21															0
22															0
23															0
24															0
25															0
26															0
27															0
28															0
29															0
30															0
31															0
Միջին															

Հավելված 3

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 330-Ն որոշմամբ

Աղյուսակ 5. Վարկային ռիսկի հաշվարկը (ՎՌՋՄ ենթակա ակտիվներ, որոնց մեծությունը ճշգրտվում է արժեքի տատանման գործակիցներով)

Ներդրումային ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

(հազար դրամ)

Անվա օրերը	ՎՌՋՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը	Ակտիվների հիմնական կորուստների պահուստ	Ակտիվների մեծությունը, որոնց գծով ռիսկի կշիռը ՎՌՋՄ կիրառման պահանջով փոխվել է	ՎՌՋՄ կիրառման արդյունքում կարևորին ռիսկի փոխհատուցումը	Ռիսկի 0 % կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 10% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 20% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 30% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 50% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 75% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 100% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 110% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 150% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	Ռիսկի 225% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը զեկավարելուց հետո	ՎՌՋՄ ենթակա ակտիվների գծով կանխիկ ռիսկ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															0
2															0
3															0
4															0
5															0
6															0
7															0
8															0
9															0
10															0
11															0
12															0
13															0
14															0
15															0
16															0
17															0
18															0
19															0
20															0
21															0
22															0
23															0
24															0
25															0
26															0
27															0
28															0
29															0
30															0
31															0
Միջին															

Հավելված 4

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսի 27-ի թիվ 330-Ն որոշմամբ

Աղյուսակ 6. Վարկային ռիսկի հաշվարկը (հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ և տրամադրված երաշխավորություններ, որոնց վրա չեն տարածվում ՎՌՋՄ-ները)

Ներդրումային ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

(հազար դրամ)

Ամսվա օրերը	Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (դրամային հոսքային)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՋՄ կիրառումից հետո (1-2) * 1 %	Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (արտարժութային հոսքային)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՋՄ կիրառումից հետո (4-5) * 1,5 %	Երաշխավորություններ	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՋՄ կիրառումից հետո (7-8) * 100 %	Ռիսկի 0% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 10% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 20% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 30% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 50% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 75% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 100% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 110% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 150% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 225% կշիռ (3+6+9)-ից	Ընդամենը վարկային ռիսկ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1			0						0											0
2			0						0											0
3			0						0											0
4			0						0											0
5			0						0											0
6			0						0											0
7			0						0											0
8			0						0											0
9			0						0											0
10			0						0											0
11			0						0											0
12			0						0											0
13			0						0											0
14			0						0											0
15			0						0											0
16			0						0											0
17			0						0											0
18			0						0											0
19			0						0											0
20			0						0											0
21			0						0											0
22			0						0											0
23			0						0											0
24			0						0											0
25			0						0											0
26			0						0											0
27			0						0											0
28			0						0											0
29			0						0											0
30			0						0											0
31			0						0											0
Միջին																				

Հավելված 5

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսների 27-ի թիվ 330-Ն որոշմամբ

Աղյուսակ 7. Վարկային ռիսկի հաշվարկը (հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ և տրամադրված երաշխավորություններ, որոնց վրա տարածվում են ՎՌՁՄ-ները)

Ներդրումային ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.

(հազար դրամ)

Անվա ո ր ող	Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ կիրառումից հետո (1-2) * 1 %	Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ կիրառումից հետո (4-5) * 1,5 %	Երաշխավորություններ	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՈՓԳ կիրառումից հետո (7-8) * 100 %	Հաշվեկշռային դիտարկվող ռիսկի մեծությունը, որի ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է	ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը	Ռիսկի 0% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 10% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 20% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 30% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 50% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 75% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 100% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 110% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 150% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 225% կշիռ (3+6+9)-ից	Ընդամենը վարկային ռիսկ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1			0						0													
2			0						0													
3			0						0													
4			0						0													
5			0						0													
6			0						0													
7			0						0													
8			0						0													
9			0						0													
10			0						0													
11			0						0													
12			0						0													
13			0						0													
14			0						0													
15			0						0													
16			0						0													
17			0						0													
18			0						0													
19			0						0													
20			0						0													
21			0						0													
22			0						0													
23			0						0													
24			0						0													
25			0						0													
26			0						0													
27			0						0													
28			0						0													
29			0						0													
30			0						0													
31			0						0													
Միջին																						

Հավելված 6

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 330-Ն որոշմամբ

Աղյուսակ 7.1. Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջների վարկային ռիսկի հաշվարկը (3-ից 7-րդ աղյուսակներում ներառելու համար)

Ներդրումային ընկերության անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

Անվա օրեր	Ռիսկի կշիռ	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո սա (ակտիվներ, որոնց վրա չեն տարածվում ՀՀԿԲ-ների)	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո (ՀՀԿԲ-ի ենթակա ակտիվներ, որոնց մեծությունը չի գերազանցում արժեքի տատանման գործակիցներով)	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո (ՀՀԿԲ-ի ենթակա ակտիվներ, որոնց մեծությունը գերազանցում է արժեքի տատանման գործակիցներով)	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո սա (հեռավար կիրառվող գործիքներ և տրանսդրված եկամտաբերություններ, որոնց վրա չեն տարածվում ՀՀԿԲ-ները)	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո (հեռավար կիրառվող գործիքներ և տրանսդրված եկամտաբերություններ, որոնց վրա չեն տարածվում ՀՀԿԲ-ները)
1	2	3	4	5	6	7

*«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 129-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջից բացառություններ սահմանելու մասին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 16-ի թիվ 125-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով վերացնել կարգավորվող շուկայում թույլատրված արժեթղթերով կարգավորվող շուկայից դուրս գործարքներ իրականացնելու հետ կապված որոշ սահմանափակումներ, որը չի հանգեցնի ներդրողների շահերի վտանգմանը, և հաշվի առնելով այն, որ մասնավոր գործարքների կողմերը նախապես հայտնի են,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 129-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 72-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 129-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի իմաստով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 129-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջից բացառություն կազմող մասնավոր գործարքներ են համարվում՝
   1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,
   2) թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,
   3) արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները:

2. Սահմանել, որ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթը թույլատրվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, եթե տվյալ գործարքը համապատասխանում է սույն որոշման պահանջներին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 16-ի ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 129-րդ հոդվածի 3-րդ մասից բացառություն կազմող մասնավոր գործարքի մասին» թիվ 125-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 դեկտեմբերի 2012 թ., Ն331-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. նոյեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.12.2012 թ. (ՀՀԳՏ Ն31 (444)[1], 27.12.2012):

*Ներդրումային ընկերություններին լրացուցիչ գործունեության տեսակներ թույլատրելու և դրանց իրականացման համար պահանջներ սահմանելու մասին**

Նպատակ ունենալով խթանել ներդրումային ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների և իրականացվող գործունեության տեսակների քանակի և ծավալի աճը՝

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Թույլատրել ներդրումային ընկերություններին, որպես ներդրումային ընկերության գործունեության հետ սերտորեն առնչվող լրացուցիչ գործունեության տեսակ՝ իրականացնել ֆինանսական շուկայի և ներդրումային ծառայությունների վերաբերյալ ֆինանսական գրագիտության բարձրացման հետ կապված գործունեություն:

2. Մինչև սույն որոշման 1-ին կետով նախատեսված լրացուցիչ գործունեության իրականացումը ներդրումային ընկերությունը պետք է ստանա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման նախնական համաձայնությունը՝ ներկայացնելով գործունեության իրականացման ռազմավարությունը, կրթական ծրագիրը, գործունեության իրականացման ձևերը, կարգը և պայմանները սահմանող ներքին իրավական ակտերը, ինչպես նաև այդ գործունեության հետ կապված ամբողջական այլ տեղեկություններ:

3. Ներդրումային ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման նախնական համաձայնությանն է ներկայացնում նաև սույն որոշման 2-րդ կետով նախատեսված լրացուցիչ գործունեության իրականացման ռազմավարության, կրթական ծրագրի, գործունեության իրականացման ձևերը, կարգն ու պայմանները սահմանող ներքին իրավական ակտերի փոփոխությունները, ինչպես նաև այդ գործունեության հետ կապված այլ տեղեկությունների փոփոխությունները:

4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում դիմումը չմերժելու և/կամ այլ կերպ չարձագանքելու դեպքում նախնական համաձայնությունը համարվում է տրամադրված:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 դեկտեմբերի 2012 թ., N332-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգը» 4-րդ կետի մասին[*]

Վերջին ժամանակաշրջանում գրավատները պարզաբանման ակնկալիքով Կենտրոնական բանկին ուղղել են հետևյալ հարցադրումը.

Կարո՞ղ են արդյոք գրավատների կողմից օրենքով սահմանված ժամկետներից հետո ներկայացված ճշգրտված հաշվետվությունները համարվել «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդված 1-ին մասի ա) և բ) կետերին համապատասխան ներկայացված՝ այդպիսով բացառելով օրենքով սահմանված ժամկետներում ներկայացված հաշվետվություններում առկա ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) համար պատասխանատվությունը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ վերը նշված իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի հետևյալ դրույթներին.

1. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի ա) և բ) ենթակետեր, որոնց համաձայն՝ գրավատնային գործունեություն իրականացնող անձինք պարտավոր են Կենտրոնական բանկ ներկայացնել ամսական և եռամսյակային հաշվետվություններ համապատասխանաբար մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25-ը և մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը:

2. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ամսական և եռամսյակային հաշվետվությունների ձևերը և լրացման կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

3. «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի ժբ) ենթակետը, որի համաձայն՝ գրավատների նկատմամբ տուգանքը, որպես պատասխանատվության միջոց կիրառվում է, եթե սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) ենթակետերով սահմանված հաշվետվություններում ներկայացված տվյալներում առկա են ոչ էական թերություններ (վրիպակներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ):

4. Կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված՝ «Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգի» 4-րդ կետը, որի համաձայն՝ «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ զուգահեռաբար հաշվետվությունների փոփոխման (ճշգրտման) վերաբերյալ գրավոր տեղեկացնելով Կենտրոնական բանկի նախագահին: Ճշգրտված հաշվետվության էլեկտրոնային տարբերակների և գրավոր տեղեկանքի առկայության դեպքում միայն փոփոխված հաշվետվությունները համարվում են Կենտրոնական բանկ ներկայացված:

Նման իրավական կարգավորման պարագայում գրավատնային գործունեություն իրականացնող անձինք կատարած կլինեն իրենց պարտավորությունները, եթե օրենքով սահմանված ժամկետներում Կենտրոնական բանկի սահմանած կարգին համապատասխան, առանց ոչ էական թերությունների (վրիպակների, ոչ իրավաբանական անճշտությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) Կենտրոնական բանկ ներկայացնեն վերը նշված հաշվետվությունները, հակառակ դեպքում նրանց նկատմամբ կարող են կիրառվել օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ: Միաժամանակ, նման կարգավորումը գրավատնային գործունեություն իրականացնող անձանց իրավունք է վերապահում մինչև օրենքով սահմանված ժամկետների ավարտը ներկայացնել հաշվետվությունների ճշգրտված տարբերակներ, և այդ իրավունքից օգտվելու պարագայում օրենքով սահմանված ժամկետներում Կենտրոնական

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:

բանկ ներկայացված կհամարվեն արդեն հաշվետվությունների ճշգրտված տարբերակները՝ բացառելով պատասխանատվությունը նախկինում ներկայացված հաշվետվություններում առկա բոլոր թերությունների համար:

Կենտրոնական բանկի խորհուրդը հարկ է համարում նաև ընդգծել, որ գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից օրենքով սահմանված ժամկետներից հետո ճշգրտված հաշվետվությունների ներկայացման ձևի նախատեսումը նպատակ չի հետապնդում գրավատներին ազատել օրենքով սահմանված ժամկետներում ճշգրիտ հաշվետվություններ ներկայացնելու պարտականությունից: Հետևաբար, օրենքով սահմանված ժամկետներում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների նկատմամբ կիրառելի է «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի ժբ) ենթակետը նաև այն դեպքում, երբ գրավատները օրենքով սահմանված ժամկետներից հետո ներկայացրել են ճշգրտված հաշվետվություններ, հակառակ դեպքում այն հնարավորություն կընձեռեր գրավատներին անտեսել սահմանված ժամկետներում Կենտրոնական բանկ ճշգրիտ հաշվետվություններ ներկայացնելու օրենքով ամրագրված պարտավորությունը և միաժամանակ խուսափել այդ պարտավորության չկատարման դեպքում հնարավոր պատասխանատվության միջոցներից:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով «Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 20-րդ հոդվածի իէ) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***պաշտոնապես պարզաբանում է .***

Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից օրենքով սահմանված ժամկետների ավարտից հետո Կենտրոնական բանկ ներկայացված ճշգրտված հաշվետվությունները չեն համարվում օրենսդրության պահպանմամբ ներկայացված և կարող են առաջացնել համապատասխան պատասխանատվություն:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2012 թ., N10

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված և ֆինանսական համակարգում կնքվող երաշխավորության դրույթների մասին[*]

2012 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների դիմում-բողոքների և տեղում ստուգումների արդյունքում բացահայտված խնդիրների շրջանակներում առաջացել է պարզաբանման ենթակա հետևյալ հարցը.

Արդյոք կարո՞ղ է պայմանագրով երաշխավորի նկատմամբ սահմանվել պատասխանատվություն, որն ավելին կլինի, քան վարկառուին հավասար ամբողջ ծավալով սահմանված պատասխանատվությունն է:

Հարցադրման հետ կապված բացահայտված փաստերը վկայում են, որ ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունն իր կողմից տրամադրված վարկերի ապահովման միջոց հանդիսացող երաշխավորության պայմանագրերում նախատեսում է դրույթ, որի համաձայն երաշխավորը վարկառուի կողմից ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման վերաբերյալ նախազգուշացվելուց հետո եռօրյա ժամկետում պետք է կատարի այն: Վարկառուի կողմից չկատարված պարտավորությունները, այն է՝ ծանուցմամբ նշված գումարը եռօրյա ժամկետում երաշխավորի կողմից չվճարվելու դեպքում, վերջինս վարկային կազմակերպությանը վճարում է տուգանք՝ հիշյալ գումարի 5 կամ 10 տոկոսի (հիմնականում) չափով՝ որպես տույժ:

Ուսումնասիրված դեպքերը վկայում են, որ վարկառուի պարտավորությունները գործնականում երաշխավորվում են երկու և ավելի երաշխավորների կողմից, և վարկային կազմակերպությունն այդ գումարները (տույժերը) պահանջում է բոլոր երաշխավորներից, անկախ վարկառուի կամ երաշխավորներից մեկի կողմից նույնիսկ ծանուցմամբ նշված ժամկետում վարկառուի ժամկետանց պարտավորությունների կատարման փաստից: Արդյունքում, վարկային կազմակերպությունը միևնույն պարտավորության ոչ պատշաճ կատարման համար երկու կամ ավելի անձանցից ստանում է վարկի կատարման հետ չկապված փոխհատուցումները, քանի որ պայմանագրում իմպերատիվ ամրագրված է, որ երաշխավորը ծանուցմամբ սահմանված վճարը եռօրյա ժամկետում չվճարելու դեպքում վարկային կազմակերպությանը վճարում է տուգանք:

Այսպիսով, կարելի է փաստել, որ վարկային կազմակերպությունը տրամադրելով վարկ, հաճախ ստանում է հիշյալ վարկից անկախ եկամուտներ, որը չի բխում երաշխավորության ինստիտուտի էությունից, քանի որ երաշխավորությունը հանդիսանում է պարտավորության ապահովման միջոց և որպես առանձին պարտավորություն գոյություն ունենալ չի կարող:

Սույն խնդրի պարզաբանման համար ՀՀ կենտրոնական բանկը կարևորում է երաշխավորության ինստիտուտի էությունը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով երաշխավորության համար նախատեսված դրույթների էությունը և բովանդակությունը, համաձայն որոնց.

- երաշխավորը պայմանագրով պարտավորվում է պատասխանատվություն կրել այլ անձի (վարկառուի) կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 375),
- երաշխավորը և պարտապանը պարտատիրոջ առջև կրում են համապարտ պատասխանատվություն, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 377),
- երաշխավորի պատասխանատվությունը չի կարող ավելի մեծ լինել, քան վարկառուին հավասար ամբողջ ծավալով սահմանված պատասխանատվությունն է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 377),
- երաշխավորությունը դադարում է դրանով ապահովված պարտավորությունը դադարելու դեպքում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 382),
- երաշխավորությամբ ապահովված պարտավորությունը կատարած պարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել երաշխավորին: Հակառակ դեպքում՝ իր հերթին պարտավորությունը կատարած երաշխավորն իրավունք ունի պարտատիրոջից բռնագանձել անհիմն ստացածը կամ հետադարձ պահանջ ներկայացնել պարտապանին (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 381),

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. դեկտեմբերի 25-ին:

- պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 438):

Հիշյալ խնդրի պարզաբանման համար ՀՀ կենտրոնական բանկը կարևորում է նաև այդ կապակցությամբ միջազգային փորձը, այդ թվում Եվրոպական մի շարք երկրների՝ Չինաստանի և Ռուսաստանի: Օրինակ՝ Ֆրանսիայի փորձը վկայում է, որ Ֆրանսիայի երաշխավորությունը կարգավորող հոդվածների համաձայն երաշխավորությունը չի կարող գերազանցել հիմնական պարտավորության գումարը կամ երաշխավորության պայմանագիրը չի կարող կնքվել հիմնական պարտավորության համեմատությամբ վատթարացնող պայմաններով: Ընդ որում, եթե առկա է հիմնական պարտավորությունը գերազանցող կամ վատթարացնող պայմաններով երաշխավորության պայմանագիր, ապա այն ոչ թե առ ոչինչ է, այլ ուղղակի երաշխավորի պարտավորությունը պետք է նվազեցվի՝ այն համապատասխանեցնելով հիմնական պարտավորության չափին: Հատկանշական է նաև հիշյալ խնդրի հետ կապված Չինաստանի դատական նախադեպը, որը վիճելի դեպքերի կապակցությամբ անդրադարձ է կատարել նաև այսպես կոչված «անկախ» երաշխավորությանը: Մասնավորապես, դատական որոշման մեջ նշվում է, որ միջազգային առևտրային իրավունքի նորմերի համաձայն այդպիսի երաշխավորություն հնարավոր է միայն միջազգային առևտրային իրավահարաբերություններում, ինչը սակայն բացառվում է Չինաստանի ներքին պարտքային հարաբերությունների դեպքում:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ երաշխավորության պայմանագրի վրա չեն կարող տարածվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պարտավորությունը խախտելու վերաբերյալ պատասխանատվություն կիրառելու դրույթները, քանի որ երաշխավորությունը որպես առանձին պարտավորություն գոյություն ունենալ չի կարող և հանդիսանում է պարտատիրոջ նկատմամբ ոչ հիմնական պարտավորություն, ավելին՝ երաշխավորի նկատմամբ տույժեր, տուգանքներ կամ ցանկացած այլ պատասխանատվության միջոցներ նախատեսելը չի բխում երաշխավորության ինստիտուտի, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով երաշխավորության համար սահմանված դրույթների էությունից:

Կարևորելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խնդիրը՝ ապահովել ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ, բացառելու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վերահսկվող ընկերությունների կողմից օրենքների դրույթների՝ ի վնաս սպառողների մեկնաբանումը, ինչպես նաև հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իէ» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***պաշտոնապես պարզաբանում է .***

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների կամ այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքվող երաշխավորության պայմանագրերում երաշխավորությամբ ստանձնած պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար երաշխավորի նկատմամբ տույժեր, տուգանքներ կամ ցանկացած այլ պատասխանատվության միջոցներ նախատեսելը չի բխում երաշխավորության ինստիտուտի, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով երաշխավորության համար սահմանված դրույթների էությունից և, հետևաբար, չի կարող նախատեսվել:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2012 թ., N11

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 149
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 152
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 157
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 158
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 169
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 190
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 201
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 203
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 209
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2012 թ. նոյեմբեր*	*2012 թ. նոյեմբերի իրական աճի ինդեքսը 2011 թ. նոյեմբերի նկատմամբ (%)*	*2012 թ. դեկտեմբեր*	*2012 թ. դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2011 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	105.5	-	106.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	107133.8	102.9	118030.0	107.1
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	664.1	101.4	816.4	100.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	60369.1	109.5	46519.1	102.8
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	206219.0	104.7	347597.6	104.8
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	65061.6	100.4	89520.6	103.0
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	81927.3[1]	110.7[1]	95515.3	108.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	119422	101.1	153756[2]	101.5

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2012 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	98.1[1]	99.5	101.5
Փետրվար	99.1	103.9[1]	101.2	98.3
Մարտ	100.1	103.4[1]	95.4	98.2
Ապրիլ	99.4	99.9[1]	100.2	98.5
Մայիս	98.7	98.3[1]	100.5	97.5
Հունիս	98.7	102.2	101.4	90.3
Հուլիս	98.5	98.0	99.7	77.5
Օգոստոս	99.6	100.6	101.5	81.2
Սեպտեմբեր	100.8	101.3	100.0	95.5
Հոկտեմբեր	101.2	102.7	100.2	98.6
Նոյեմբեր	101.4	100.9	99.5	100.0
Դեկտեմբեր	102.1	99.2	100.6	104.6
2012 թ. հունվար – դեկտեմբերը 2011 թ. հունվար – դեկտեմբերի համեմատությամբ	102.6	107.0	97.5	95.0

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2010*	*2011*	*2012*	*2012*	*2012*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.7	3.4 [2]	3.6	3.6	4.8
Փետրվար	0.3	0.9 [2]	-0.9	2.6	3.0
Մարտ	0.8	0.8	0.1	2.7	2.2
Ապրիլ	1.3	-0.2	-0.6	2.1	1.9
Մայիս	1.0	0.0	-1.3	0.8	0.5
Հունիս	-0.8	-1.4	-1.3	-0.4	0.7
Հուլիս	-0.8	-3.0	-1.5	-1.9	2.3
Օգոստոս	1.3	-0.6	-0.4	-2.3	2.5
Սեպտեմբեր	-0.2	0.8	0.8	-1.5	2.5
Հոկտեմբեր	1.0	0.3	1.2	-0.3	3.4
Նոյեմբեր	1.6	1.2	1.4	1.1	3.6
Դեկտեմբեր	1.8	2.5	2.1	3.2	3.2
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	9.4	4.7	3.2		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	8.2	7.7	2.6		

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՄԻՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2012 թ. դեկտեմբերը 2012 թ. նոյեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**102.1**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**103.6**	**1.93**
Բանջարեղեն և կարտոֆիլ	131.2	1.96
Միրգ	105.3	0.19
Հացամթերք	101.1	0.11
Մսամթերք	101.0	0.10
Կենդանական և բուսական յուղեր	101.8	0.06
Ձու	103.8	0.05
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.4**	**0.06**
Հագուստ և գործվածք	101.1	0.03
Մշակույթի ապրանքներ	108.7	0.03
Դեղամիջոցներ	100.7	0.01
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	99.3	-0.02
Ծառայություններ, որից՝	**100.2**	**0.06**
Տրանսպորտի	100.7	0.03
Բուժսպասարկման	100.7	0.03
Բնակարանային, կոմունալ	100.1	0.02
Կապի	99.8	-0.01

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2009	2010	2011	2012
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	-0.29	0.48	0.71[4]	0.65
Փետրվար	-0.53	0.74	0.42[4]	0.08
Մարտ	1.14	0.82	0.64[4]	0.04
Ապրիլ	1.46	0.70	0.45[4]	0.02
Մայիս	0.41	0.04	0.32[4]	-0.16
Հունիս	0.25	-0.22	0.37[4]	0.35
Հուլիս	-0.22	-0.42	0.21[4]	0.14
Օգոստոս	0.37	0.17	0.27[4]	-0.06
Սեպտեմբեր	0.72	0.63	0.42[4]	0.67
Հոկտեմբեր	0.48	1.21	0.36[4]	0.73
Նոյեմբեր	0.62	1.18	0.41	0.37
Դեկտեմբեր	0.61	0.63	0.55	0.58
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	4.63	6.20	6.28[4]	5.27
Փետրվար	3.02	7.59	5.75[4]	4.91
Մարտ	3.33	7.14	5.68[4]	4.27
Ապրիլ	3.47	6.35	5.42[4]	3.81
